ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԻՆՏԵՐՆԵՏՈՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը.

Ներկայումս, Հայաստանի Հանրապետությունում գործում են մի շարք օրենքներ, որոնք նախատեսում են որոշակի տպաքանակ ունեցող մամուլում տարաբնույթ տեղեկությունների հրապարակման պահանջ: Նշված պահանջն արդիական է եղել նախկինում, երբ տպագիր մամուլը հանրության իրազեկման հիմնական միջոցն էր և այդպիսի նորմերը միտված են եղել հանրության լայն շրջանակների տեղեկատվության հասանելիությունն ապահովելուն՝ հրապարակային ծանուցելուն:

Սակայն, վերջին տարիներին տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացումը, թվային հարթակների հասանելիությունն ու դրանց միջոցով տեղեկությունների տարածման շրջանակը փաստում են տպագիր մամուլով տեղեկատվության հրապարակման ժամանակավրեպ լինելը: Տպագիր մամուլը կորցրել է իր նախկին տարածումն ու դերակատարումը: Բացի այդ, տպագիր մամուլում հրապարակման գործընթացը բավականին ծախսատար է:

Այս ամենը հանգեցնում է հանրության լայն շրջանակների համար տեղեկատվության փաստացի հասանելիության սահմանափակման և լրացուցիչ ծախսերի: Հետևաբար, տպագիր մամուլի հրապարակումները ներկայումս չեն կարող համարվել արդյունավետ կամ հասանելի ձև տեղեկատվության տարածման համար:

Ավելին, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ օրենքով կամ նորմատիվ իրավական այլ ակտով սահմանված այն դեպքերում, երբ նախատեսվում է հրապարակային ծանուցում՝ տեղեկատվությունը մամուլում հրապարակելու միջոցով, հրապարակային ծանուցումը պետք է տեղադրվի նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ «http://www.azdarar.am»-ում: Այսինքն, հրապարակային ծանուցման

դեպքում Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ «http://www.azdarar.am»-ում տեղեկատվության հրապարակումը պարտադիր է: Այս պայմաններում լիովին բացակայում է տպագիր մամուլում հրապարակային ծանուցման անհրաժեշտությունը:

2. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Գործող կարգավորումների վերանայումը բխում է տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ իրավական դաշտի ներդաշնակեցման անհրաժեշտությունից, որպիսի պայմաններում հնարավոր կլինի ապահովել տարբեր գործընթացներից, օրինակ՝ շրջական միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացներից բխող տեղեկությունները, հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարմանն առնչվող հայտարարությունները որոշակի տպաքանակ ունեցող մամուլում տեղադրելու պահանջի փոխարինումը հայտարարություններ պարունակող հրապարակումների դեպքում կազմակերպության ինտերնետային կայքում կամ azdarar.am պաշտոնական ծանուցումների կայքում հրապարակման պահանջով, իսկ բանկային, ապահովագրական, ֆինանսավարկային և այլ նմանատիպ գործընթացներից բխող հրապարակումները կամ նույն ոլորտներում հայտարարությունների բնույթ չկրող, սակայն այլ փաստաթղթային հրապարակումներ ենթադրող դեպքերում, օրինակ՝ հաշվետվությունների, եզրակացությունների և նմանաբնույթ փաստաթղթերում առկա այլ տեղեկությունների փոխանցում նախատեսող դեպքերում՝ կազմակերպության ինտերնետային կայքում հրապարակելու պահանջով: Միևնույն ժամանակ, եթե բանկային, ապահովագրական, ֆինանսավարկային և այլ նմանատիպ գործընթացներից բխող հրապարակումները, նյութերը ներկայացնում են նաև հանրության համար հետաքրքրություն կամ առաջացնում են որոշակի հետևանքներ, որից ելնելով՝ անհրաժեշտ է ապահովել առավելագույն տեղեկացվածություն, բացի կազմակերպության ինտերնետային կայքում հրապարակելու պահանջից, առաջարկվում է սահմանել նաև azdarar.am պաշտոնական ծանուցումների կայքում հրապարակման պահանջ:

Այս փոփոխությունը կբարձրացնի տեղեկատվության հասանելիությունն ու տարբեր գործընթացներում հասարակության առավել լայն շրջանակների ներգրավման

արդյունավետությունը, կնվազեցնի իրավական գործընթացների նյութական ծախսերը և կխթանի ՀՀ-ում թվայնացման ռազմավարության իրականացումը:

Էստոնիայում դեռևս 2010 թվականից իրավական ակտերի և հրապարակային ծանուցումների միակ պաշտոնական աղբյուրը հանդիսանում է Elektrooniline Riigi Teataja (eRT) էլեկտրոնային պետական հարթակը:[1] Այս հարթակում հրապարակվում են ոչ միայն օրենքները, այլև բոլոր իրավական և վարչական ակտերը, որոշումներ, ծանուցումներ ու հայտարարություններ, որոնք նախկինում կարող էին տպագրվել մամուլում:

Լատվիայի պետական իրավական հրապարակումների պաշտոնական աղբյուրը Latvijas Vēstnesis-ն է՝ հասանելի www.vestnesis.lv-ում[2]: 2012 թվականից այս հարթակը համարվում է իրավական ակտերի և ծանուցումների միակ պաշտոնական էլեկտրոնային աղբյուրը: Տպագիր տարբերակը 2012 թվականից դադարեցրել է գործառույթները՝ անցնելով ամբողջական թվայնացման:

Գերմանիայում գործող «Դաշնային տեղեկագիրը» (Bundesanzeiger)[3] Գերմանիայի Դաշնային Հանրապետության պաշտոնական հրապարակման և հայտարարությունների մարմին է, վերահսկվում է Դաշնային արդարադատության և սպառողների պաշտպանության նախարարության կողմից: Նախկինում տպագիր տարբերակով հրապարակվող Bundesgesetzblatt-ը 2023 թվականից սկսած ամբողջությամբ թվայնացվել է:

Ներկայացված արտասահմանյան երկրների փորձը փաստում է, որ էլեկտրոնային հրապարակման համակարգը ոչ միայն լիարժեք կերպով կարող է փոխարինել տպագիր մամուլին, այլ նաև՝ գերազանցել նրան՝ մատչելիությամբ և արդյունավետությամբ:

3. Կարգավորման նպատակը, ակնկալվող արդյունքը.

Նախագծերով նախատեսվող փոփոխությունների նպատակն է վերացնել ծանուցումները, այլ բնույթի փաստաթղթային հրապարակումներից բխող տեղեկատվությունը որոշակի տպաքանակ ունեցող մամուլում հրապարակելու վերաբերյալ պարտադիր պահանջը՝

[1] https://www.riigiteataja.ee/en/
[2] https://www.vestnesis.lv/
[3] https://www.bundesanzeiger.de/pub/en/start?2&utm_

այն փոխարինելով www.azdarar.am հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում կատարվող և (կամ) այս կամ այն կազմակերության ինտերնետային կայքում հրապարակմամբ:

Առաջարկվող կարգավորումները կհանգեցնեն հրապարակման գործընթացի արդիականացմանը և իրենց արդյունավետությունը կորցրած իրավակարգավորումների փոխարինմանը ժամանակին առավել համահունչ և կիրառելի իրավակարգավորումներով:

4. Իրավական ակտի նախագիծը մշակող պատասխանատու մարմինը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, նախաձեռնողի, հեղինակների և մշակմանը մասնակցող անձանց մասին տեղեկություններ.

Նախագծերը մշակվել են Արդարադատության նախարարության կողմից:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ.

Նախագծերը բխում են Կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի թիվ 1133-Լ որոշման հավելված N 2-ով հաստատված՝ ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի 1-ին նպատակի 11-րդ կետից: